

ՃԱՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ
ԱՂԻՔԱՆՆԻՐՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵ-
ՐՈՒՆ ՎՐԱՑ

(Շարունակութիւն մատուցող թիւ է)

Սպասուած ընդհանուր ժողովը 1899 Յունուար 15 ինչ և ներկայ գլխոյն նիւթն և զող ժողովն է որուն մէջ Գիւանը ծանոյց թէ Տնօրէն ժողովն ստացած է 1898 Յունուար 1-էն ի վեր զործանութեան տեղեկագիրն և հաշուեցոյցները զորս, ըստ 13րդ յօդուածոյ Կանոնադրութեան, հարգողած է թաղական խորհրդոյ որմէ վերադարձուածին պէս, պիտի յղէ զայն Գիւանի Գանձաժողովոյ (1899 Յունուար 30 ի նստին մէջ միայն եօթն ամիս յետոյ, կարելի եղաւ Ընդհանուր ժողովոյն՝ զբաղիլ այս հաշուետուութեան խնդրով, ինչպէս որ պիտի երևնայ գրութեանն շարունակութեանը մէջ):

Վերոյիշեալ հրատարականաց առթիւ, ժողովոյն պաշտօնագրէն ծանուցի այն նախատեսքը զոր Տնօրէն ժողովոյ անդամներէն Տ. Պերճ Թահուան նախ ներկայ անդամն ընդհանուր կերպով, և յետոյ մասնաւորապէս ինչ գէտ, Գիւան. 11 ինչ գումարուած Տնօրէն ժողովոյ նստին մէջ համարձակած էր արտասանել: Եւ ըստ որում Տնօրէն ժողովոյ անդամն ընկերութեան գործերով զբաղելու պատճառաւ Առաջնորդարանի ժողովարարէին մէջ ի նիստ գումարուած ատեն անսոցմէ մին թողտուութեամբ էթէ ոչ կանխաւ համաձայնութեամբ ատենապետին (Տ. Տօզգ. Միսաք ժամկոչեանի) ժողովն մը անարգել ժողովականներէն մին կամ երկուքը, պահանջեցի որ Ընդհանուր ժողովը՝ հրատարականներուն ընդունելութեանն առթիւ պարտաւի ըլլալով մը զատապարտէ յիշեալ անդամն զործած ծանր յանցանքը:

Ներկայը կը յիշեն նաև անշուշտ թէ այս նիւթին վրայ խօսած ատենս ակնարկութիւններ ալ ըրի այն ժողովի ցոյցերուն որք զուրբ տեղի ունեցած էին, յիշեալ զէպքին առթիւ, Տ. Թուրքուճեանի գէտ, յիշեալ երկու անդամն կողմէ, որք եղած անարգանքն հեղինակ և մեղաւոր իրենք միայն ըլլալուն հակառակ, ելած էին վերջինէն իբր թէ պատույ հատուցում պահանջելու:

Աւելորդ է յիշել այն ազմայտոյ ընդմիջումները որովք Տ. Պերճ Թահուան և եղբայրը Տ. Կոստան Թահուան և ասոնց բարեկամը, Տ. Տօզգ. Միսաք ժամկոչեան, կը ճգնէին անդառն ընել խօսքերս որք ժողովին յուր ռազմարկութեանը ամբողջապէս գրաւեցին վայրկեան մը յետոյ տիրող հանգրտութեան մէջ, երբ յիշեալ երկու եղբայրք ժողովարարէն մեկնեցան տակաւին խօսքս չ'աւարտած:

Այս եղբայրութեանց վրայ էր որ Տ. Յովհաննէս Մովսէսեանց և Տ. Տիգրան Կամարական, մէկ կողմէ յանուն բարեկամութեան և միւս կողմէ ի սեր ընկերութեան շահուց որոց կրնար, կ'ըսէին, փասել այս մեծապէս զրգոյց զգացմանց յատուց բերած վիճակը, յորդորեցին զիս չափաւորել պահանջմանցս խտրութիւնը, և յանձն առին միախորհուրդ շարադրել բանաձև մը, անով խնդրոյն գոհացուցիլ վախճան մը տալու համար:

Ահաւասիկ յիշեալ բանաձևը.
— «Նկատելով որ Տնօրէն խորհրդոյ մէջ պատահած ցաւալի միջոցաւ մ'ակնարկութեանն առթիւ ժողովոյս մէջ տեղի ունեցած վիճաբանութիւնները ցոյց կուտան թէ Տնօրէն խորհրդոյ Պատ. անդամակից»

«նիւրու մէջ համեմատութիւնն է որ կը պահուի, և հետեւապէս, առանց սուր կարեւոր չէ արդիւնաւոր գործունէութիւն մը սպասել Տնօրէն խորհրդէն, ժողովս իւր «խորին ցաւը կը յայտնէ այս զէպքի մասին»:

«Այս բանաձևը ընդունելով, միաձայնութեամբ ընդունուեցաւ, յետ որոյ ժողովը զարձակեալ ըստի ներկայից նոյն Տնօրէն խորհրդէն և Տ. Կամարականի «երկրորդ մէկ բանաձևը, որ է.

— «Կցել պատճառաբանեալ և պարզ հրատարակել, և ընդունիլ զանոնք ամեն «իրև պարզ հրատարական»:

«Սոյն բանաձևն ալ ձեռամբարձ ըստի «նկարկուելով, ընդունուեցաւ ստուար մեծամասնութեամբ (28 ձայնով), և իբրև «որոշում Գիւանին կողմէ հռչակուեցաւ. իսկ «Տնօրէն խորհրդոյ վերակազմութիւնը Օրապարտի անցնելով յետագուեցաւ յառաջ «Վիկայ նիստին զոր որոշուեցաւ գումարել «17/29 Յունուարի կերակի օրն»:

«Այս առթիւ Տ. Յ. Ծնորճեանի առաջարկութեամբ յանձնարուեցաւ Գիւանին «աշակցիլ Տնօրէն խորհրդոյ մասնաւորապէս, ընթացիկ գործերը վարելու համար, ցմբակազմութիւն յիշեալ խորհրդին»:

«Որպէսզի ժողովը որոշ կերպով գիտնայ թէ Տնօրէն խորհրդոյ վերակազմութեանը համար քանի անդամակիցներ պէտք են, «յանձնարուեցաւ նաև Գիւանին իմանալ, «մասնաւոր նամակաւ մը, Տ. Յովսէփ Չըպուրճեանի տրամադրութիւնը թէ յետ այս «սորիկ պիտի կարենայ կանոնաւորապէս «ներկայ գտնուիլ Տնօրէն խորհրդոյ նիստերուն, ըստ որում նոյն շրջանին մէջ, հազիւ մի քանի անգամներ միայն ներկայ գտնուած է անոնց»:

Վերոյիշեալ երկու բանաձևերուն մէջ որոշակի երեզող անհամաձայնութիւն մը բացատրելու համար երկու խօսք ևս, և այս կարևոր նստին նկարագրութիւնը կը վերջանայ:

Առաջին բանաձևին ըստի զրուելու պահուն՝ անոր վերջընթեր տողերուն իմաստը ժողովականաց ոմանց կողմէ յայտնուած կարծիքներուն հետեւութեամբ՝ ժողովին առջև գտնուած պարզ հրատարականները չ'ընդունելու փափաքի մը յայտարար նշանը նկատելով, ստիպուեցայ բանաձևին հեղինակաց մասնաւոր ռազմարկութիւնը հրաւիրել սա կէտին վրայ որ թէ տեղի ունենալիք ըստարկութեամբ խնդրել հիմնապէս կարգադրուած ընդունելով զիտարկութիւն ունին իբրև անոր հետեւութիւնը՝ Տնօրէն ժողովոյ անդամն պարզ հրատարականները չեղեալ համարել, անկարող էի ինչ ուղղուած նոյն իսկ բարեկամական յորդորներուն համակերպիլ, և պիտի պահանջէի ժողովէն Տնօրէն ժողովոյ անդամն մէկ մասին և նովին գործով ընկերութեան ալ գէտ եղած նախատեսաց համար հարկ եղած պատուոյ հատուցումը, առաջարկելով արտաքսել Տնօրէն ժողովէն զայն անպատուող անդամները:

Այս խօսքերուս վրայ էր որ առաջին բանաձևը միաձայնութեամբ ընդունուելէ յետոյ Տնօրէն խորհրդէն և Կամարական ներկայացուցին ժողովոյ ըստի իրենց երկրորդ բանաձևը:

Նիստ է. — 17/29 Յունուար 1899

Օրակարգ. — Ա. — Ընթերցում և վաւերացում նախորդ նստի ատենագրութեան:

Բ. — Վերակազմութիւն Տնօրէն խորհրդոյ: Թիւ ընկերութեան ընդհ. անդամն 76

» քաղաքէն բացակայից 7

Ուստի և թիւ հրաւիրեալ անդամն 69

Ներկայ անդամներ 24
Փոխանորդագիր զրկողներ 14

Համագումար 38

որ կը կազմէ մեծամասնութիւն:

Ըստ միաձայն հաւանութեան ժողովոյ, Տ. Լևոն Աժառեանի ատենապետութեամբ ատենաւ բացուելով, նախորդ նստի ատենագրութիւնը ըստի նկարկուեցաւ և «ժողովականք 36 ըստի ստուար մեծամասնութեամբ իրենց հաւանութիւնը յայտնեցին»:

Օրակարգի երկրորդ և վերջին խնդրոյն անցնելէ առաջ՝ Տ. Յովսէփ Չըպուրճեան մի քանի զիտարկութիւններ ըրաւ ի մասին նախորդ նստին մէջ իրեն նկատմամբ տեղի ունեցած ակնարկութեանց, և յայտարարեց թէ «Եթէ իւր պաշտօնակիցները՝ կանոնապէս յարգելու մէջ նախանշանները զբաղուեցին, ինքն ալ յօժար է շարունակելու «իւր պաշտօնը»:

Այս առթիւ Տ. Ատենապետին, Տ. Յովսէփ Չըպուրճեանի և Տնօրէն ժողովոյ նախորդ ատենապետ Տ. Տօզգ. Միսաք ժամկոչեանի միջև փոխանակուած մի քանի բացատրութիւններէ յետոյ, «իրև Գիւան» կան թող լարագուեցաւ Տ. Լ. Մկրտիչեանի(*) մէկ նամակը, որով կը քննադատէր նոյն օրուան Օրակարգի «Վերակազմութիւն Տնօրէն խորհրդոյ» բացատրութիւնը, առարկելով որ Տնօրէն խորհրդը «զի անդամն մեծամասնութիւնը հրատարակած ըլլալուն համար, ըստ խորհրդաւորակաւ զորոքեան, այդ մարմինը «լուծեալ կը համարուէր, և քանի որ 7 անդամներէն 3ը հրատարակած են՝ մնացեալ երկուքը հրատարակելու նկատուին և թէ պէտք է որ նոր ընտրութիւն կատարուի 7ին համար ալ, և ի վերջոյ կ'առաջարկուի որ երբ իւր վերոյիշեալ տեսութեանցը «մասին կարծեաց տարբերութիւն ըլլայ, «և՛ զործողութեան սկսելէ առաջ ժողովի «կամքը հարցուի»:

«Տ. Մկրտիչեանի սոյն նամակին ընթերցումէն վերջ, Տ. Ատենապետը փափաքեցաւ իմանալ ժողովոյ կրած տպաւորութիւնը, և առաջարկեց որ այս առթիւ ժողովականք իրենց կարծիքը յայտնեն, և «որովհետև խօսք անոնցներ չ'եղան, Տ. Ատենապետը կրկին անգամ հարցուց թէ «զիտարկութիւն ունեցողներ չ'կային»: Այս «անգամ խօսք առաւ Տ. Ծնորճեան և ըստ թէ Ընդհանուր ժողովոյ Գիւանը իրաւունք ունէր «վերակազմութիւն» բառը «գործածելուն մէջ, քանի որ Տնօրէն խորհրդոյ անդամն մէկ մասը միայն հրատարակած էր ու քանի որ ինքն՝ Ընդհանուր ժողովը, լուծեալ չ'էր նկատել Տնօրէն խորհրդէն, մանաւանդ իւր այն որոշումը «որով կը յանձնարարէր Գիւանին՝ մասնաւոր նամակաւ մը իմանալ Տ. Յովսէփ Չըպուրճեանէ թէ տրամադրի է յետ այսօր «իրև կանոնաւորապէս շարունակելու իւր «պաշտօնը, կ'ընէ»: Տ. Ծնորճեան յարեց «թէ ասոնք որոշումներ են Ընդհանուր ժողովոյ նախորդ նստին մէջ տրուած, որուն «ատենագրութիւնը հիմայ իսկ կարդացուելով վաւերացուեցաւ ժողովէն, ուստի և «Գիւանին կը մնայ յարգել տալ ժողովոյ «որոշումները»:

«Տ. Ատենապետը յայտարարեց թէ կապուելու չ'է վերադառնալ տրուած որոշումները»:

(*) Տ. Լ. Մկրտիչեան արգելուած ըլլալով այս նստին ընկերակազմութեան, փոխանորդագիր մ'ուղղած էր Գիւանին, որով իւր ծոյցը կը յամօժէր ընկերակազմութեանը:

«րուն վրայ, որոնք նախորդ նստի ատենագրութեան ներկայ ժողովոյ մէջ վաւերացած մամլոյ ալ կրկնապէս յարգելի կը դառնան: «Ուրիշ խօսք անոնցներ չ'ըլլալով, ըստ Օրակարգի՝ Տնօրէն խորհրդոյ հրատարակեալ «Հինգ անդամն տեղ նորերու ընտրութեան «ձեռնարկուեցաւ»:

«Տեարք Պերճ և Կոստան Թահուան, ընդամենը ուղի ընտրական գործողութիւնը, «յայտարարեցին Գիւանին որ օրինաւոր կը «գտնեն Տ. Մկրտիչեանի նամակի առաջարկութիւնը, և խնդրեցին որ արձանագրութիւն իրենց համաձայնութիւնը սոյն նամակին վերաբերմամբ»:

Ընտրողական գործողութիւնները շարունակուելով և ըստ համարը կատարուելով բոլոր ժողովականաց մասնակցութեամբ, Տնօրէն ժողովոյ պակասեալ Հինգ անդամն տեղ նորերու ընտրութիւնը լրացաւ, և արդիւնը Գիւանին կողմէ հռչակուեցաւ:

Ահաւասիկ ընտրելոց անուններն.

- Տեարք Մ. Կիրճեան
- Տօզգ. Ա. Թօփճեան
- Լ. Պերպլեան
- Գ. Եսայեան
- Ե. Թուրքուճեան:

Նիստ Ը. — 23 Յունուար 1899

Թիւ անդամն 90
» քաղաքէն բացակայից 18

Ուստի և թիւ հրաւիրեալ անդամն 72

Ներկայ 19 անդամներ, և 2 անդամներ փոխանորդագիր զրկած են: Համագումար 21:

Արդ, ատենի բացման համար օրինաւոր մեծամասնութիւն չ'գոյանալով, որոշուեցաւ ըստ 10րդ. յօդուածոյ կանոնադրութեան, կրկին անգամ հրաւիրել ընկերութեան անդամները յատուցելով կերակի օր, 30 Յունուար, անփոփոխ պահելով ժողովոյն օրակարգը:

Նիստ Թ. — 30 Յունուար 1899

Թիւ անդամն 90
» քաղաքէն բացակայից 18

Ուստի և թիւ հրաւիրեալ անդամն 72

Ներկայ անդամն 25
Փոխանորդագիր զրկողներ 11

Համագումար 36

«Տ. Փոխ-Ատենապետը յայտարարեց թէ «ըստ կանոնագրի 10րդ. յօդուածի, հակառակ ներկայից թուոյն փոքրամասնութեան, «ժողովոյ սոյն օրուան նիստը օրինաւոր «է, և յետոյ Գեր. Յակոբ Եպիս. Աշոտի «պատուաբեր ներկայութեանը քաղաքեցի «լով և ընդհանուր բաղձանաց համաձայն, «յանուն ժողովականաց խնդրեց Ն. Գերբապատեանին որ հանձն նախագահէ ժողովոյն և առաջնորդել անոր աշխատութիւնները»:

«Գերբապատեան Յակոբ Եպիսկոպոս ժողովականաց ստիպման վրայ՝ համարելով ընդունիլ «տեղի ունեցած հրաւիր նախագահական «աթոռը բազմելով ատենի բացումը հրաւիրեց»:

«Կարգացուեցաւ օրակարգն որ է անփոփոխ նախորդ Ը. նստի օրակարգը»:

Յ. Յ. ԾՆՈՐՃԵԱՆ

(Շարունակելի)

Յառաջիկայ թուով պիտի ուղղենք կարգ մը սխալներ որոնք անաւարտութեամբ տեղի ունեցած են Նոր-Օրի 32 թուով հրատարակուած Աղբատարանի յօդուածին մէջ: Մ. Խ.

ԳՈՅԱՐՆԵՐ

Իւրաքանչիւր մարդ որոշ պարտականութիւններ ունի կատարելու դէպ ի այն հասարակութիւնը որու մէջ կ'ապրի:

Հ. ԻՊՍԷՆ

* Գտիր միայն սեփական հոգեւոր բանալին, իսկ երբ գտար, այն աստիճանը այդ բանալով կրնաս բանալ ամենի հոգին:

ԳՈԳՈՅԸ

* Պահպանեցէք, եթէ կրնաք այն շահերը, որ ձեզ կը կապեն մարդկային ընկերութեան հետ, բայց անոր հետ մշակեցէք նաև այն զգացումները որ ձեզ անկէ կը բաժնէ:

— Ամենքի համար բաւական գործ կայ: ՊԻԻԻՆԷՐ

* Վատերը կ'ատեն և կը բամբասեն սրտի աէր մարդերը. անոնքնման են խոհանոցի այն շներուն, որոնք երբ որսկան շուն մը կը տեսնեն, իսկայն կը հաչեն անոր դէմ, բայց չեն համարձակիր գուրս ելլել անոր հետ կռուելու համար:

— Այն գիտունը, որու բարքը փճացած է, կը նմանի կոյրի մը, որ բռնած ունի ձեռքին ջահ, և որով կը լուսաւորէ ուրիշները ասանց կարենալու ինքզինքը լուսաւորել:

— Առանց բարի գործերու գիտունը նըման է ասանց մեղրի մեղրուի: Ասացէ՛ք այդ վատթար հպարտ անձին, բանի որ մեղր շունիս, ազատ մեզ քու խայթուածքներդ:

Գեղեցիկ է անշուշտ սիրելը, բայց պէտք չէ պաշտան դնել այն մարդու վերքերուն վրայ, որ ուրիշները կը ասնջէ:

ՍԱՐՏԻ

* Ամեն տեղ, ուր մեծ հոգի մը մարմին կուտայ իր մտքին՝ առաջ կուգայ Գողգոթա մը:

ՀԷՅՆԷ

* Մարդկանց հետ վարուելու ընդունակութիւնը սեփական ԵԱՆ հրաժարուելու ընդունակութիւնն է:

— Հասարակութեան մէջ սովորաբար կը մանեն շողջորդութիւնով, կը մնան այնտեղ տաղտկանալով և կը հեռանան ծաղրելով: Է. ՎԷՐԹԷՅՄԻՐ

Հաւաքեց
Ա. ԶԱՐԵՀԵԱՆ

Le Gérant J. MUNIER

ԳԱՅԷ ԵՓՐԱՏ

Ապօրին Պապ-էլ-Պոսթալը շրայարակին վրայ եւ Նուագածուաց խմբի Զօրանցի դիմացը

ՕՀԱՆՆԷՍ ՍԻՄՈՆԵԱՆ

ԴԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մէկ հատիկ Զբօսարանն է Գահիրէի մէջ, ուր կենցաղաւոր մը կարենայ անցընել հաճոյալի ժամանց մը: Ապօրինի ընդարձակ հրապարակին զովագին օղբ, վայրին սրանչելի գիրքը, և սպասներուն մաքրութիւնը, ըմպելեաց անարատութիւնը, այս ամեն առաւելութիւններով ԵՓՐԱՏ ԶԲՕՍԱՐԱՆԸ քիչ ատենուան մէջ յաջողած է ունենալ յաճախորդներու պատկառելի թիւ մը, որոնք ամեն իրիկան, ժամագրութիւն ըրած են, ու ժամերով կը վայելեն երջանիկ ընկերութիւն մը:

Ամեն կարգի զովարար, թարմ ու անխառն ըմպելիքներէ զատ մասնաւոր խնամքով կը պատրաստուի ընտիր ընտիր միջոցներէ օչարակ. ամենէն զբժուարահասանելն անգամ պիտի գոհման Եփրատէն:

ՃԱՅԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Շարա Ապու-Սապահ
Նիեու-Տնիվեսիլ իրեղարամին դիմացը:

Օղաւան ու զուարճայի գիրք. մաքուր ու վայելուչ սպաս. համեղ ու անդարար կերակուրներու զանազանութիւնն, անխարդախ պատրաստութիւն. ճոխ ճաշացուցակ մը գիրարմատչելի գիներով. ահա՛ Գազանճեան եղբայր ճաշարանը:

Ո՛վ որ կ'օգէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, փտահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

ԿՈՒԶԷՔ ՈՒՆԵՆԱԼ

ՈՍԿԻ

ԿՈՒԶԷՆ ԼԱՐՈՒՈՂ ԽԻՍ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ

ՃԱՄԱՑՈՅՑ ՄԸ

ՄԻՄԻԱՅՆ 120 ՂՐԾ. ՎՃԱՐԵԼՈՎ

ԴԻՄԵՑԷՔ

ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԳԱՀԻՐԷ, ՄՈՒՍԲԻ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաև ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներ ու ամենադիւրամատչելի գներէն սկսելով մինչև աղամանդազարգ: Արժաթ ժամացոյցներ 30 զրուշէն սկսեալ: Նիքէլ ռումնութուտ ժամացոյցներ 22 զրուշէն սկսեալ. նաև սկիւ, արժաթ ոսկեպատ շղթաներ և գոհարեղէններ. ինչպէս նաև պատի և գոնաօրի բազմազան բանտիւններ:

Ամերիկեան Նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յատուկ, 10 զրուշի անհաւատալի գնոյ փոխարէն, որոնք լաւ կը բանին:

Ուրեմն գիմեյէք ուղղակի

ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՊԷԼԱԵԱՆ-ՅԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿԵՐ

ԱՐԱՆՑ ԵՒ ՏՐԻԵԱՆՑ

ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապօրին մեծ պողոտային վրայ Տայրայի Սանիյի դիմացը, նախկին Էլիսրական գործիներու վաճառատունը:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արգոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիմոյ Պաս. յաճախորդները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտահամութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագիրութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով,

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին:

ԱՏԱՄԱՐՈՅԺ

Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 դաստիկոնը:

Կը բժշկէ բերնի և ակուայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ՉՈՒԿԻՉ-ՄԵԲԵՆԱԳՈՐԾ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐԲ

ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ա. ԴԱՐԲԵՆԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

—X—

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արգոյէ զանազան գործիներ ոսկերչութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծրարկ, ևն., յաճախորդները գոհացնող պայմաններով:



Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ԶԻՇԴ ԴԻՍԱՑ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՐԳՈՄ Ս. ՓԱՓԱՉԵԱՆ

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լիզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցիտոմներ, մահազեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակազուլներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն.:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն ինքնակա եւ նաշակառո սպազմութեամբ:

ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ